ԱՐԴԻ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐ

ՌՈԲԵՐՏ ՄԱՐԻՆՅԱՆ

Թեմատիկ ուսումնասիրության առումով հասմընդգրկման հիմնախնդիրը շարունակում է մնալ մասնագետների ուշադրության կենտրոնում: Փորձ է արվում աշխարհի փոխակերպության արդի պայմաններում սեփական երկրի վարքագիծը դիտարկել որոշակի հայացքով: Այն բազմաշերտ է, որում կարևորվում է վերազգային կորպորացիաների գործունեությունը: Ելակետ ունենալով մեթոդաբանական այն սկզբունքը, թե արդի տնտեսական ձևերը կարելի է փնտրել նաև տնտեսական էվոլյուցիայի նախորդ աստիճաններում, Ա.Մկրտչյանը վերազգային կորպորացիաների առաջացումը կապում է XIX դարավերջի հետ՝ հետագա ընթացքը բաժանելով հինգ սերունդների: Չանդրադառնալով դրանց բաժանող առանձնահատկությունների վերաբերյալ կատարած արծարծումներին՝ հինգերորդ սերնդի համար բնորոշ է համարում «տնտեսական հզորությամբ և համաշխարհային տնտեսության մեջ պետություններից անկախ սուբյեկտների կարգավիճակով հանդես գալու հնարավորությունը»՝ որպես ռազմավարական վարքագիծ, որն, ի վերջո, ենթադրում է «համաշխարհային տնտեսության գործունեության» միասնականացում: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է ՎԱԿ-երի գործունեության հիմքերին ու համաշխարհային տնտեսության վրա ունեցած ազդեցությանը՝ հատկապես նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, կառավարման համակարգերի կատարելագործման, մրցակցությանը նպաստելու հետ կապված և այլն: Վերլուծություններ են կատարվում ըստ տարածաշրջանների օտարերկրյա ներդրումների, ՀՀ արտահանման կառուցվածքի, ուղղությունների ու միտումների, ՀՀ-ում ՎԱԿ-երի ներգրավմանը նպաստող գործոնների և գործունեության վերաբերյալ՝ փորձելով դրանք գնահատել[1]:

Իրողություն է, որ ՎԱԿ-երի գործունեության հետևանքները ընդունող երկրների համար զուտ դրական չի կարելի համարել ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական առումներով: Ի վերջո, ՎԱԿ-երի գործունեությունը կապված է մայր երկրի պետությունների շահերի հետ: Ամեն երկիր ձգտում է առաջին հերթին իր երկրի քաղաքացիների բարեկեցության ապահովմանը: Այս առումով ՎԱԿ-երի և տվյալ երկրի շահերը համընկնում են՝ հնարավորություն տալով իրենց երկրների պետություններին օգտագործելու այլ

[1] Տե՛ս Վերազգային կորպորացիաների ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի զարգացման վրա, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2010:

երկրների ռեսուրսները, մինչդեռ դրանց գործունեությունն ընդունող երկրների համար այդ գործընթացն ուղեկցվում է բազմաթիվ բացասական ազդեցություններով՝ և՛ քաղաքականության, և՛ վնասակար արտադրության, և՛ աշխատավարձի ցածր մակարդակի, և՛ որակյալ աշխատուժի արտահանման և այլն: Նշված երևույթների մասին խոսվում է հպանցիկ՝ շեշտադրում կատարելով ՎԱԿ-երի գործունեությունից ակնկալվող տնտեսական օգուտների վրա: Ի դեպ, այդպիսի մեկնաբանությունը բնորոշ է այդ ոլորտի վերաբերյալ հայ հեղինակների գրեթե բոլոր հրապարակումներին: Նույն դիտակետից, «եվրոպական ոգու» համամարդկային նշանակության բացառիկության դիրքերից, հայ հեղինակները, հաճախ առանց իրական չափորոշիչների (երկրների տնտեսական զարգացման մակարդակի, ազգային ավանդույթների և այլն), առանց կնճիռների հիմնավոր վերլուծության, ցանկության ու հաճոյախոսության մակարդակով կոչեր են անում գնալու դեպի ԵՄ անտեսելով շուկայի հագեցվածության, այստեղ մուտք գործելու դժվարությունների փաստը, ինչպես նաև այլ շուկաների ներուժային հնարավորությունները: Թ. Թորոսյանը Հայաստան-ԵՄ առևտրային հարաբերությունների խթանման համար առաջարկում է հայտնի միջոցառումների հետևյալ շարքը.

պետական ակտիվ քաղաքականության իրականացում՝ ուղղված Հայաստանի և հայ արտադրողի ճանաչմանը ԵՄ շուկայում,

- պետական քաղաքականություն՝ ուղղված արտադրանքի որակի բարելավմանը՝ համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին և ԵՄ շուկայի պահանջներին,
- մաքսային և հարկային համակարգերում բարեփոխումների իրականացում,
- ներդրումների ներգրավմանն ուղղված խթանման քաղաքականություն,
- ԵՄ շուկայի մասին տեղեկատվության մատչելիության ապահովում,
- առևտրային խոչընդոտների մեղմում,
- բեռնափոխադրման ոլորտում մրցակցության առկայություն:

Հեղինակին «հրապուրիչ» է ներկայանում խնդիրը Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա միասնացված ամբողջության մեջ լուծելու անհրաժեշտությունը: Մոտեցումն անհամոզիչ է, բայց դա կանխակալ միտում ունի, որն ակներև է դառնում հետևյալ արտահայտության ենթատեքստում. «Վերջապես մենք ինքներս պետք է հասկանանք, որ առանց լուծելու տարածաշրջանային խնդիրները, հնարավոր չէ արդյունավետ մասնակցություն ունենալ համաշխարհային և եվրոպական ինտեգրման ակտիվ գործընթացներին. մեր տարածաշրջանի առումով դա ավելի ակնհայտ է, քանի որ այն որպես ամբողջություն միայն կարող է ակտիվ դեր ունենալ, որպես հարավ-հյուսիս, արևմուտք-արևելք տնտեսական և աշխարհաքա-

դաքական կարևոր խաչմերուկ»[2]: Սա մի տեսակետ է, ըստ որի Հայաստանը հարևանների հետ հարաբերություններում ավելի շատ զիջումների պետք է գնա. միայն այդքանը:

Ընդհանրապես, վերը նշված հարցադրումները տնտեսությունների «միասնացման» ենթիմաստ ունեն: Ինչ խոսք, արդի հասարակությունների տնտեսական-մշակութային զարգացումները ենթադրում են արտադրատնտեսական և սոցիալական կառուցվածքների որոշակի ընդհանրացում: Իսկ «Այս պարագայում,– ինչպես նկատում է Ս.Սարինյանը անգլիացի հասարակագետ Էռնեստ Գելների «Ազգերը և ազգայնականությունը» գրքի քննախոսականում,- գործողության սեմանտիկ բովանդակությունն ու սոցիալական ենթատեքստը դառնում են ընդհանուր, ուր ազգայնականությունն այլևս արգելք չի հանդիսանա մշակութային բարեկամությանն ու ինտերնացիոնալիզմին, և եթե միջազգային այս փոխատեղությունն ընդհանրանա, ինքնին կվերանա ազգայնականության խնդիրը: Հնարավոր է, որ ինդուստրիալ-մշակութային ընդհանրությունը երկու երկրների հարաբերությունները կարգավորի ներդաշնակ կապերով, բայց որ դա չի հանգեցնի «ազգայնականության վերացմանը», ինչպես ենթադրում է Գելները, ապացույցի կարիք չունի, քանզի ազգայնականությունը տվյալ երկրի, պետության, էթնիկական միավորի՝ որպես տիեզերական սուբյեկտի գոյության ձևն է»[3]:

Հենց այդ իմաստով էլ XIX դարի ռուս հասարակագիտական մտքի հայտնի ներկայացուցիչ Ի.Կիրեևսկին նկատում է. «Մենք չպետք է վախենանք մեր ազգայնությունը, մեր կրոնը, մեր պատմական հիշողությունները, մեր աշխարհագրական դիրքը կորցնելուց, մեր կենցաղն իր ամբողջության մեջ այնքան տարբեր է մնացել Եվրոպայից, մենք ֆիզիկապես չենք կարող դառնալ ո՛չ ֆրանսիացիներ, ո՛չ անգլիացիներ, ո՛չ գերմանացիներ»[4]:

Այսօր էլ Ռուսաստանի մտավորականությունն արդի հասարակական հերթափոխությունը դիտարկում է լայն հայացքով, համադրում վերջին երկու տասնամյակի ձեռքբերումներն ու կորուստները: Ա. Կազինը գրում է. «Որքան ասես կարելի է հեգնել միայն «Աստծո թագավորության» մեջ հնարավոր «բացարձակ բարության» գոյությունը, բայց իրողությունն այն է, որ կապիտալիզմը երբեք մեզանում չի ունեցել հոգևոր հիմքեր և մինչև այժմ էլ չունի»[5]:

Իսկ Օլեգ Պոպցովը վերը նշված դիտակետից նկատում է, թե աշխարհի երկրների սանդղակում երկիրը, ըստ էության, բոլոր ոլորտներում կորցրել է իր դիրքերը, և Ռուսաստանի ներդրումային գրավչությունն աճող մասնավոր սեփականության պայմաններում ոչ թե ավելանում, այլ նվազում է: Մինչդեռ մոլորությունները շարունակվում են՝ հասարակությանը մղելով

---

[2] Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը, Եր., 2010, էջ 8, 30:

[3] **Ս. Սարինյան**, Հայոց գրականության երկու դարը, հ. IV, Եր., 2004, էջ 65-66:

[4] Литературная газета, 19-25 января, 2011, №2.

[5] Литературная газета, 21-27 июля, 2010, №29.

գուշակությունների, որոնք մեզ պարտադրում են տարբեր վերլուծական կենտրոններ: Իսկ Կարեն Շահնազարովը, շեշտելով Ռուսաստան երկրի առանձնահատուկ լինելու հանգամանքը, նկատում է. «Ռուսաստանը միանգամայն այլ երկիր է: Ես կտրականապես դեմ եմ մեր վզին փաթաթվող այն կանխադրույթին, իբր մենք բոլորի նման ենք: Այո, մենք ինչպես բոլորն ենք, բայց նաև ինչպես ոչ բոլորը: Չինացիները բոլորի նման են, բայց նաև նման չեն բոլորին: Իսկ ամերիկացիները...: Եղել եմ Ամերիկայում, կինո եմ նկարահանել, այնպես որ՝ գիտեմ. նրանք ներքուստ իրենց առանձնահատուկ են համարում: Նրանք բոլորի նման չեն: Դրանում է նրանց ուժը, նրանց ձեռքբերումների երաշխիքը: Խորհրդային մարդուն, եթե հիշում եք, նույնպես ասում էին, որ նա այնպիսին չէ, ինչպես բոլորը: Նա ավելի լավն է, մաքուր է, հոգեպես՝ հարուստ: Եվ դա է պայմանավորել մեր շատ հաջողություններ գրականության, արվեստի բնագավառներում, մինչև անգամ թռիչքը դեպի տիեզերք: Իսկ ինչ լավ բան կա՝ լինել բոլորի պես: Դա, իհարկե, չի նշանակում, թե մեզ պետք է համարենք գերմարդ: Բայց անհրաժեշտ է իմանալ, որ մենք առանձնահատուկ ենք, որ ունենք մեր ճանապարհը, իրերի նկատմամբ մեր հայացքը, և այդ հայացքը գոյության իրավունք ունի, և մենք իրավունք ունենք լինելու այնպիսին, ինչպիսին որ կանք»[6]: Եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումներից է համարվում անկախ անհատը՝ որպես իրավունքի և մշակույթի սուբյեկտ: Սակայն ակնհայտ է հոգևոր բովանդակության կորուստը, որի մասին դեռևս ժամանակին Նիցշեն ասում էր, թե նոր Եվրոպայի համար Աստված մեռել է: Եվ արդյո՞ք համաշխարհային տնտեսության միօրինակացման, համընդգրկուն միատարր էքսիկական կազմով հասարակություն ստեղծելու նախագծերը՝ ուղղված իբր ընդհանուր հավասարակշռության ստեղծմանը, չեն ծնում չարի և քաոսի աճի պարադոքսը: Գրականության մեջ կարելի է հանդիպել տեսակետի, ըստ որի, որպես բաց հասարակության ընձեռած առավելություն, շարժը համարվում է տնտեսական աճի, համաշխարհային տնտեսական հավասարակշռության պահպանման գործոն. «Այս տեսանկյունից՝ միգրանտների (գաղթականների) մուտքը Ռուսաստան, ԱՄՆ, Իսպանիա, Իտալիա, Կանադա և այլն, այդ երկրների համար պահանջ է: Չէ՞ որ դա այդ երկրների միավոր արդյունքի արտադրությունը էժանացնելու և ազգային տնտեսությունը ավելի մրցունակ դարձնելու հնարավորություն է: Միաժամանակ, ներգաղթողների (իմիգրանտ) աշխատուժն այդ երկրներում ավելի խնայողական, արտադրողական (ինովացիոն) կիրառություն է ստանում, որն արագացնում է գեոտնտեսական հավասարակշռության ապահովման գործընթացը: Մարդկանց շարժը նաև թույլ է տալիս ինտերնացիոնալացնել ազգային տնտեսությունները, նպաստում է հասարակության ժողովրդականացմանը»[7]: Մի կողմ թողնենք տնտեսական աճի և տնտեսական հավասարակշռության վարկածները: Ինչպես նկատում է

---

[6] Литературная газета, 19-25 января, 2011, №2.

[7] **Багратян Г.,** Основы геоэкономики (мегаэкономики), Ер., 2010, с. 10.

Վ.Բոլշակովը, քրիստոնեության նկատմամբ թշնամանք ունեցող մուսուլման ներգաղթյալներն արևմտյան քաղաքակրթությունն ընդունում են միայն զվարճությունների և սոցիալական նպաստների համար: Նրանք չեն ընդունում «քեզ Հռոմում պահիր այնպես, ինչպես իրենց պահում են հռոմեացիները» հայտնի իմաստությունը: Նշանավոր դերասանուհի Բրիջիդ Բարդոն, ում մեղադրում էին ռասիզմի մեջ, հենց այդ պատճառով է կշտամբում ներգաղթողներին. «Երբ գալիս ենք ձեր երկիրը, մենք մեզ թույլ չենք տալիս ապականել ձեր եկեղեցիները, ուրեմն ինչու եք դուք դա ձեզ թույլ տալիս Ֆրանսիայի եկեղեցիներում»: Նրանք, ովքեր, օրինակ, Աֆրիկայից գալիս են Ֆրանսիա, ըստ էության ազգային մշակույթի լուրջ հիմքեր չունեն, ու թեև շատերի լեզուն ֆրանսերենն է, սակայն չեն «ներծծվում» ֆրանսիական բնապատկերում: Նրանց ընդվզումը եվրոպական քաղաքակրթության դեմ հաճախ «չի բարձրանում գողախմբերի և խանութների ցուցափեղկերի և քաղաքամերձ ոստիկանական տեղամասերի ջարդարարների մակարդակից»: Ինքնին հարց է առաջանում՝ մուսուլման ներգաղթողների հոսքը եվրոպական զարգացած երկրներ «նպաստո՞ւմ է հասարակության դեմոկրատացմանը», թե՞ իջեցնում է դասական եվրոպական ժողովրդավարության նշաձողը: Այստեղ իսկ նա վկայակոչում է Սոլժենիցինին, ով, հայացք ձգելով եվրոպական դեմոկրատիայի պատմության վրա և փորձելով ռուսական արդի իրականությունը գնահատել այդ հարթության մեջ, մի առիթով նկատել է, թե ռուսները ստիպված են լինելու ժողովրդավարություն սովորել ոչ մեկ հարյուրամյակի ընթացքում: Ուստի, երբ խոսքը մուսուլման ներգաղթյալների մասին է, հարկ է նկատի ունենալ, որ «մաշկի և դիմագծերի, կրոնի և սովորույթների տարբերությունները ոչ թե սոսկ ռասայական և մշակութային են. դրանք տարբեր աշխարհներ են: Մարդկային այդ աշխարհները փոխներթափանցող են, որը, սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, պահանջում է հազարամյակներ»[8]:

* * *

Զարգացման և տնտեսական աճի աղբյուրների վերաբերյալ նոր համակարգի մշակումը դարձել է օրակարգի խնդիր բոլոր երկրների համար, քանի որ վերջինս առնչվում է երկրի ներուժի չափման հիմնահարցին: Այս տեսանկյունից էլ Յու.Սուվարյանը, Վ.Սարգսյանը և Գ.Վարդանյանը քննության առարկա են դարձրել «կրթություն-տնտեսական աճ», «գիտություն-տնտեսական աճ» կապերը՝ ելակետ ունենալով այն ընդհանրացումը, թե «կրթության մեջ կատարված հասարակական և մասնավոր ներդրումներն այս կամ այն չափով իրենց ներգործությունն են ունենում տնտեսական աճի վրա»[9]: Այդ կապերը որոշակի իմաստ են ստանում միկրո- և մակրոմակարդակներում: Առաջինն արտահայտում է անհատի կրթական աստիճանի և եկամուտների փոխհարաբերությունը. մոդելներում

[8] Литературная газета, 8-14 декабря, 2010, № 50.
[9] Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», Երև., 2010, № 1, էջ 8:

ստացված գործակիցների համաձայն՝ կրթության յուրաքանչյուր լրացուցիչ տարի միջին հաշվով 10 տոկոսով ավելացնում է անհատի եկամուտը: Մակրոմակարդակում այդ կապը նույնպես արտահայտում է դրական հարաբերակցություն կրթական ներուժը բնութագրող ընդհանուր և ՀՆԱ տարբեր ցուցանիշների փոխկախվածությունների միջև, թեև այստեղ, բացի տնտեսականից, առկա է նաև սոցիալական հանգամանքը:

Հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել արդի տեսական մտածողության մեջ՝ իր փորձառական (էմպիրիկ) արդյունքներով դրսևորելով անհամապատասխանություն, իսկ առանձին դեպքերում էլ հակասություն տեսական նախադրույթների հետ: Օրինակ՝ համաձայն բերված գրականության տեսության, որոշ հետազոտություններ արձանագրել են, որ կրթության ազդեցությունը եկամուտների վրա զարգացող երկրներում կազմել է 10, իսկ զարգացած երկրներում՝ 6,5 տոկոս, մի այլ դեպքում՝ Մեծ Բրիտանիայի տվյալների ժամանակային շարքերի վիճակագրական վերլուծության արդյունքում բացահայտվել է արտադրողականության գործոնի և կրթության տարբեր մակարդակներում ներառվածության ցուցանիշների միջև կապը՝ տարբեր ցուցանիշների համար հաշվարկելով առաձգականության գործակիցներ 0,42-0,63-ի սահմաններում, իսկ մի երրորդ դեպքում, եթե բարձրագույն կրթության ազդեցությունը տնտեսական աճի վրա Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և Շվեդիայում էական է եղել, ապա Իտալիայում և Ավստրալիայում ազդեցություն չի նկատվել՝ եզրակացնելով, թե բարձրագույն կրթությունն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է աճի համար[10] և այլն:

Հեղինակների ներկայացրած գրականության տեսությունը նպատակ ունի ցուցադրելու հիմնախնդրի կարևորությունը «տնտեսական աճի ապահովման ուղիներ հարթող» երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար:

Վերլուծության հիմքում դնելով ՀՀ գործընթացները բնութագրող համապատասխան ցուցանիշները և ցույց տալով, որ 1998-2009 թթ. ՀՆԱ միջին աճի մեջ գիտության և կրթության բաժինը կազմել է 0,45 տոկոս՝ զարգացման հետագա ընթացքի համար առաջադրվում են հետևյալ մոտեցումները.

- Կրթական ոլորտում. պետական չափորոշիչների արդիականացում, նոր տեխնոլոգիաների ներդրում, հեռանկարային մասնագիտություններով կադրերի պատրաստում, միջազգային կապերի ընդլայնում և ծառայությունների արտահանում, կրթություն-գիտություն-արտադրություն կապի ամրապնդում, բնակչության ընդհանուր կրթական մակարդակի բարձրացում[11] և այլն:

---

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 9-15:

[11] Ա.Ասլանյանը բարձրագույն կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման կարևոր լծակ է համարում վարկավորման մատչելի համակարգի առկայությունը, որն արդեն իր ստույգությունն է գտել այնպիսի շերտավորված սկզբունքների մեջ, ինչպիսիք են՝ վարկառուի սոցիալ-տնտեսական վիճակը, ֆինանսական, իրավական, բանկային համակարգերի զարգացման աստիճանը և այլն (բոլոր համակարգերում ընդհանուր է պետության ակտիվ աջակցությունը և վարկավորման արտոնյալ բնույթը): Քանի որ բանկերի նպատակը

- Գիտության ոլորտում. հիմք ընդունելով ռազմաարդյունաբերական համալիրը՝ գիտելիքահենք արդյունաբերության զարգացումը համարել տնտեսական զարգացման քաղաքականության անկյունաքար (ստեղծել կրթագիտաարտադրական համալիրներ), անցնել գիտության պետական ֆինանսավորման բազային և ծրագրանպատակային ձևերին, նորամուծական գործունեության խթանման նպատակով կիրառել ներդրումային հարկային վարկի մեխանիզմը[12]:

Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու վերաբերյալ հեղինակների եզրահանգումները կառուցված են որոշակի սկզբունքների հիման վրա, սակայն կախված են բազմաթիվ «եթե»–ներից ու պայմանականություններից:

* * *

Եթե Մ.Բաղալյանին մտահոգում են բարձրագույն կրթության որակի հարցերը[13], ապա գիտության և տնտեսական աճի փոխկախվածության ենթատեքստում Մ.Ոսկանյանը ուշադրություն է հրավիրում մարդկային կապիտալի ձևավորման գործընթացներում տեղ գտած հետևյալ իրողությունների վրա. խզվածությունը կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաների միջև, գիտությանն ու կրթությանը հատկացվող պետական ծախսերի ցածր մակարդակը, բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքը, տնտեսության իրական հատվածի մի շարք ճյուղերում գիտական կադրերի բացակայությունը, բնակչության ընդհանուր թվի մեջ ուսանողների տեսակարար կշռի աճի, սակայն պահանջարկ չունեցող շրջանավարտների թվի միջև ոչ ճիշտ հարաբերակցությունը, տնտեսության ու գիտության նվազ փոխհամագործակցությունը[14]: Կարծիք կա, թե համընդհանրացման դարաշրջանում հարստությունն ու բարեկեցությունը բնորոշ են այն երկրներին, որոնք առաջադիմում են հետևյալ ոլորտներում. կատարյալ ենթակառուցվածքների ստեղծում, արդյունավետ կրթական ծրագրի ներդրում, որի շնորհիվ գիտելիքները ծառայում են հասարակության հանրօգուտ նորոգությանը, հարկային մտածված քաղաքականության մշակում, ներդրումների հիմնավորում, գիտական հետազոտությունների խրախուսում և գլխավորը՝ ոգևորող ղեկավարության առկայություն: Ըստ որոշակի աղբյուրների՝ երիտասարդ ամերիկացիների զգալի մասը ոչ միայն չի ստանում անհրաժեշտ կրթություն, այլև նրանց մեջ չի պատ-

---

շահույթի ստացումն է, ուստի կրթական վարկավորման համակարգի կայացման համար առավել ընդունելի է համարվում հատուկ կարգավիճակ ունեցող, ոչ բանկային մասնագիտացված կազմակերպության ստեղծումը, որում պետությունը պետք է հիմնական մասնակցություն ունենա (տե՛ս Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները. հանրապետական գիտաժողովի նյութեր, 17-18–ը մայիսի, 2010, Եր., «Տնտեսագետ», էջ 12-15):

[12] Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», Եր., 2010, №1, էջ 23-29:

[13] Տե՛ս Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները, նշվ. հրատ., էջ 106-113:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 237-245:

վաստվում նվազագույն հետաքրքրություն գիտության, հատկապես մաթեմատիկայի, բնական գիտությունների, ինժեներական գործի նկատմամբ: Ամերիկացի ուսանողների խոստովանությամբ՝ իրենց մշակույթը «միտված է զվարճություններին»[15]:

Ամերիկան այդ պակասը կարող է լրացնել այլ, մասնավորապես՝ զարգացող երկրների բարձրորակ մասնագետների հաշվին:

Մամուլում և գիտական հանդեսներում հաճախակի են հրապարակումները, որոնցում հանրապետության համար որպես ռազմավարական նպատակ նշվում է գիտելիքահենք տնտեսության ստեղծումը: Ռ.Վարդանյանը, անդրադառնալով հանրապետության գիտության ու կրթության արդի խնդիրներին, վկայակոչում է այսպիսի մի դեպք. «Չապաև» կինոնկարի դիտարկման ժամանակ Պետկինոյի նախագահը փորձում է Ստալինին ներկայացնել խորհրդային կինեմատոգրաֆիայի նվաճումները: Երբ էկրանին հայտնվում է ձիով սլացող Չապաևը, նա դիմում է առաջնորդին.

Իոսիֆ Վիսարիոնովիչ, տեսնո՞ւմ եք, Չապաևն ասես արշավում է նժույգով, իսկ իրականում նրա տակ ոչ մի ձի էլ չկա: Դա կոչվում է ռիրպրոյեկցիա:

- Ի՞նչ է «ռիրպրոյեկցիան»,– ատամների արանքից հարցնում է առաջնորդը՝ վառելով ծխամորճը:

- Դա նշանակում է, որ դերասանը, նստած աթոռակին, արշավում է, իսկ էկրանից թվում է, թե ձիու վրա է:

- Եվ այդ աթոռակո՞վ եք ուզում առաջ անցնել Հոլիվուդից[16]:

Մեր պայմաններն ու հնարավորությունները բոլորովին այլ են, այնուամենայնիվ, իրադարձությունների այդ ընթացքն ամենաանցանկալին է հանրապետության հասմար:

* * *

Տնտեսագիտական մտքի հայտնի վերլուծաբան Ռ.Սելիգմենը նկատել է. «Միանգամայն ակնհայտ է, որ տնտեսական աճը չափազանց բարդ երևույթ է: Տնտեսական աճն արտահայտող տեսությունը պետք է ներառի և բնական ռեսուրսները, և՛ քաղաքական հաստատությունները, և օրենսդրությունը, ինչպես նաև բազմաթիվ հոգեբանական և սոցիալական գործոններ: Ամեն ինչ ընդգրկող տեսության մշակումը գրեթե անհնարին է»[17]. Եվ իրոք, այսօր էլ բացակայում է այն համադրական ցուցանիշը, որը կարող է արտահայտել տնտեսական զարգացման գործընթացն իր ամբողջ բարդությամբ: Ու թեև տնտեսագիտական մտքի արտադրանքում բավական շատ են տնտեսական զարգացումն արտահայտող մոդելները, այնուամենայնիվ, դրանցում քննության առարկա են դարձել բնական և աշխատանքային ռեսուրսների, հիմնական կապիտալի, գիտատեխնիկական առաջ-

---

[15] Տե՛ս Литературная газета, 3-9 июня, 2009, № 23:

[16] Տե՛ս «Ազատամտություն», 20.10.2009:

[17] Курс экономической теории (под ред. М.И.Чепуриной, Е.А.Киселевой), Киров, 2002, 557.

ընթացի, հասարակական ամբողջական պահանջարկի՝ որպես տնտեսական աճի գործոնների հետ կապված հարցերը: Տեսական այս սկզբունքները տևական եղան տնտեսագիտության բնագավառում: Օրինակ՝ ինչպես նկատում են տնտեսագետներ Ա.Ռագետինը և Ռ.Էտնովը, դեռևս Դավիթ Յումի և Ադամ Սմիթի ժամանակներից տնտեսական աճի աղբյուրներն անփոփոխ կապվում էին կապիտալի կուտակման հետ, որի ամեն մի ավելացում ուղղակիորեն հանգեցնում է արդյունաբերական գործունեության աշխուժացման, հետևապես՝ իրական հարստության ավելացման[18]:

Ավելի ուշ քննության առարկա դարձան ինստիտուտներ – տնտեսական աճ կապի թելերը: Կալիֆոռնիայի (Բերկլի) համալսարանի պրոֆեսոր, արդի վերլուծական փիլիսոփայության ներկայացուցիչ Ջ.Սերլը նկատում է. «Երբ ես Օքսֆորդում ուսանող էի, տնտեսագիտության տեսությունը մեզ սովորեցնում էին իբրև բնագիտական առարկա: Տնտեսագիտությունը գուցե և որոշակի առումով տարբերվում է ֆիզիկայից, սակայն լոկ այնքանով, որ քիմիայի կամ կենսաբանության առարկան նման չէ ֆիզիկական գիտելիքների առարկային: Արդյունքները մեզ դասավանդում էին այնպես, կարծես թե դրանք գիտական տեսություններ էին: Ուստի, երբ մենք սերտում էինք այն դրույթը, թե խնայողությունները հավասար են ներդրումներին, դա մեզ մատուցվում էր նույն տոնով և նույն ձևով, ինչպես որ մասսայի և արագացման ուժի արտադրյալի հավասարության հիմնադրույթը»:

Ձեռնարկատերերը, լինելով ռացիոնալ, իրենց ապրանքը վաճառում են՝ հավասարեցնելով սահմանային ծախսերը և սահմանային եկամուտը, կարծես խոսքն այն մասին է, որ մարմինների ձգողականությունն ուղիղ համեմատական է սեփական մասսային և հակադարձ համեմատական դրանց միջև առկա տարածության քառակուսուն: Ոչ մի տեղ և երբեք չի հիշատակվել տնտեսագիտության տեսության կողմից նկարագրվող մարդու հավատքի և նրա այլ արմատացած սովորույթների հետ կապված իրական կախվածության մասին, որոնք միանգամայն տարբեր են ֆիզիկայում կամ քիմիայում առաջացող կախվածությունից: Խնդիրն առանձնահատուկ կարևորություն ունի շուկայական համակարգին անցնող երկրների համար, որը դարձել է Ա.Մարկոսյանի, Դ.Հախվերդյանի և Ա.Հովասափյանի «Ինստիտուտներ և տնտեսական աճ» (հետաձգված բարեփոխումներ. բաց թողնված հնարավորությունների կորուստներ) աշխատության քննության առարկան (Եր., 2010): Հարկ է նկատել, որ նշված կապը բարդ ու հակասական է իր իրացումներում, բազմակի կապերի հանգույցների իր կողմնորոշումներում[19]: Խորհրդային տնտեսական ու քաղաքական համակարգի հանկարծահաս փլուզումը նախկին հանրապետություններին կանգնեցրեց փաստի առաջ՝ ինչից սկսել, ինչպես գտնել տնտեսական առաջընթացի ընդհանուր օրինաչափություններ ենթադրող կենսունակ գործոնների համադրությունը (տնտեսական ազատություն, գների ազատականացում, մասնավոր սեփականություն և այլն): Նշված աշխատությունը որոշակի

---

[18] Տե՛ս „Вопросы экономики", 2008, № 8, էջ 4:
[19] Տե՛ս „Вопросы экономики", 2007, № 8, էջ 5:

էքսկուրս է՝ տեսության արդի մեկնությունների մեջ քննության ենթարկելու քաղաքականության, ինստիտուտների և տնտեսական աճի, համաշխարհային քաղաքակրթության համակարգում ժողովրդավարության, տնտեսական ազատության և տնտեսական բարեկեցության փոխազդեցության հիմքերի հարցերը և այդ սահմաններում տեղադրելու Հայաստանի ինստիտուցիոնալ միջավայրի տնտեսաչափական վերլուծությունն ու նոր տնտեսակարգի երկու տասնամյակների հետագծում նշմարելու բաց թողնված հնարավորություններն ու կորուստները: Հեղինակների կարծիքով՝ խնդիրը հանգում է այն իրողությանը, որ Հայաստանի Հանրապետությունը, բոլոր ցուցիչների (ինդեքս) առումով դասվելով տնտեսապես մասամբ ազատ երկրների շարքը, «հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներով էապես հետ է մնում տնտեսական ազատության հարաբերական բարձր մակարդակով անցումային երկրներից»[20]: Ինստիտուցիոնալ բարեփոխումների դանդաղեցումն ունեցել է տարբեր հետևանքներ.

առաջին հերթին՝ դրանք ներդրումների ձևով 2-3 մլրդ դոլար ներգրավելու կորուստներ էին, որոնք կապահովեին նոր տեխնոլոգիաներ, աշխատատեղեր և բարձր որակավորմամբ կառավարում, ինչպես նաև կնպաստեին հիմնական կապիտալի նորացմանը (դրա մաշվածությունը հանրապետությունում կազմել է 80), արտադրողականության և բնակչության բարեկեցության բարձրացմանը,

- ՀՀ հիմնական շուկան մնում էր Ռուսաստանը, մինչդեռ բարեփոխվող երկրներն իրենց արտաքին առևտուրն հիմնականում կողմնորոշում էին դեպի արևմտյան երկրներ,

- ՀՀ-ում միջին աշխատավարձը կարող էր հասնել մինչև 500, այլ ոչ թե 207 դոլարի և այլն:

Գոյություն ունի սերտ հարաբերակցություն տնտեսական ազատության, ժողովրդավարացման, օրենքի և բարեփոխումների գերակայության ցուցիչների միջև: Հանրապետության ապագան «Նորարարական տնտեսություն» ստեղծելու մեջ է, որը պահանջում է որոշակի ինստիտուցիոնալ և մշակութային դժվարությունների հաղթահարում, ինչպիսիք են՝ մենիշխանությունը, բյուրոկրատիան, կոռուպցիան, թույլ արդարադատությունը[21] և այլն:

Ընդհանրապես, տեսությունը միշտ էլ պարունակում է որոշակի պատրանքայնություն, ուստի հեղինակների հաշվարկներում գուցե և չափազանցության միտում կա, սակայն նրանց հարցադրումներում առկա է որոշակի իրատեսական հայացք:

Դ.Հախվերդյանը, անդրադառնալով ինստիտուցիոնալ գործոնների և հետսոցիալիստական երկրների տնտեսական աճի կապի հարցերին, հիմնավորում է այն դրույթը, որ եթե 1990-ական թվականների երկրորդ կեսին շուկայական ինստիտուտների ամրապնդումը դիտվում էր ավելի նեղ շրջա-

---

[20] **Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Ա.Հովասափյան,** Ինստիտուտներ և տնտեսական աճ, Եր., էջ 195:

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 193-202:

նակներում, ապա վերջին տարիներին ինստիտուցիոնալ գործոնների և շուկայական տնտեսաձևի կայացման կապերին հատկացվում է էական դեր: Անցնում են տարիները, փոխվում են հայացքները, և Դ.Հախվերդյանը գծում է երևույթների գնահատման մի շառավիղ, ըստ որի՝ «եթե մեր կարճաժամկետ քաղաքականությունը սահմանափակված է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ պայմաններով, ապա երկարաժամկետ հեռանկարում մենք կարող ենք դրսևնք վերածել արտադրության աճն ու սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող գործոնի: Բայց այդպիսի քաղաքականության հաջող անցկացման համար անհրաժեշտ են այլ գիտելիքներ, քան փոխարժեքի և տոկոսադրույքների ուղղումների քաղաքականությունն է»[22]:

Ռուս հասարակագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչ Պյոտր Ստրուվեն նկատել է՝ մարդը պատրաստ է և բավականաչափ հասունացել է լավ կյանքի համար, և միայն ոչ խելամիտ հասարակական կառուցվածքն է նրան խանգարում դրսևորելու արդեն առկա հատկություններն ու հնարավորությունները[23]: Իսկ դա ենթադրում է իրավական, հոգեբանական, քաղաքական, սոցիալական, տնտեսական ու ավանդույթային առանձնահատկությունների մի ամբողջ դաշտ, ուր առկա է դժվար հաղթահարելի մի սահման, որը, ինչպես նկատում է Հ.Աղաջանյանը, բնականոն և ընդունելի ինքնակարգավորման սկզբունքների արմատավորման համար պահանջում է երկարատև ժամանակաշրջան[24]: Միշտ չէ, նշում է տնտեսագետը մի այլ տեղում, որ «արտաքին ուժերի թելադրանքով իրականացվող բարեփոխումները» համապատասխանում են Հայաստանի պայմաններին[25]: Այսինքն՝ հասարակությունը պետք է անցնի ինքնաստեղծման մի որոշակի ընթացք, քան «արտաքին ազդեցության պայմանական ժամանակն է»:

* * *

Իսկ «պայմանական ժամանակը» պահանջում է այս կամ այն ցուցանիշը ենթարկել ոչ թե տնտեսական կյանքի տվյալ պահի համապատասխանության կամ անհամապատասխանության նեղ չափումներին, այլ երևույթները դիտարկել ճանաչողական ուրիշ՝ ավելի լայն սկզբունքներով: Խոսքը հատկապես վերաբերում է տնտեսական համակարգերի էվոլյուցիոն զարգացման ուսումնասիրությանը: Պատմական դպրոցի և դասական տնտեսագիտության տիրույթների տարբերությունը հետազոտական օբյեկտում այն է, որ «հին քաղաքատնտեսության համար դա ժամանակակից տնտեսությունն է, իսկ պատմական ուղղության համար՝ մարդկային ցեղի

---

[22] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. հանրապետական գիտաժողովի նյութեր, 2010, էջ 426:

[23] Տե՛ս Литературная газета, 2009, № 44:

[24] Տե՛ս **Հ.Աղաջանյան,** Պետությունը և տնտեսությունը, Եր., 2004, էջ 137:

[25] Սոցիալական պետություն, հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Եր., 2007, էջ 50:

տնտեսությունն ընդհանրապես, իր պատմական զարգացման մեջ»[26], այսինքն՝ տնտեսական հաստատությունների ծագման և զարգացման պատմության ուսումնասիրությունը: Միայն համակողմանի տնտեսական փաստերի առկայությունն է հնարավոր դարձնում երևույթները քննել իրական հիմքի վրա: Ու թեև Վ.Ռոշերը իրեն համարում էր դասական դպրոցի հետևորդը և նպատակ ուներ լրացնելու առաջադրված տեսությունը տնտեսական զարգացման պատմությամբ, այնուամենայնիվ, շեշտում էր տնտեսական օրենքների հարաբերական բնույթը տարբեր ժողովուրդների և տարբեր դարաշրջանների համար, որ «չի կարող լինել մեկ տնտեսական իդեալ բոլոր ժողովուրդների համար այնպես, ինչպես որ հագուստը չի կարվում մեկ չափսով»[27]: Տնտեսական իրականությունը հակասական է և ոչ միանշանակ: Հետևապես՝ տնտեսական քաղաքականությունը պետք է ելակետ ունենա այս կամ այն որոշակի պայմանները: Բոլոր տնտեսագետները ձգտում են «լավագույն ժողովրդատնտեսական իդեալի», իսկ դա նշանակում է մի կողմից՝ ժողովուրդների «անհատականությունների» հետ կապված բազմաթիվ իդեալների մշակում, իսկ մյուս կողմից՝ ժամանակ առ ժամանակ այդ իդեալների վերափոխում, քանի որ ժողովրդական պահանջմունքների ամեն մի փոփոխության հետ փոխվում է նաև տնտեսական իդեալը: Ուստի՝ «տեսության շարադրման ժամանակ մի կողմ ենք թողնում նման տնտեսական իդեալների մշակումը: Մենք զբաղվում ենք, այսպես ասած, ժողովրդական տնտեսության անատոմիայով և ֆիզիոլոգիայով», տվյալ պայմաններին ու պահանջմունքներին համապատասխան միջոցառումների մշակմամբ: Մարդիկ «ոչ հրեշտակներ են և ոչ սատանաներ», իդեալին ձգտումը բնորոշ է յուրաքանչյուր անհատի և ազգի: Սակայն անհրաժեշտ է ելակետ ունենալ ոչ թե օրենքը, այլ տնտեսական փաստը. «....մարդիկ ապրում են ոչ թե օրենքների և հաստատությունների համար, այլ ընդհակառակը...: Ինչը համապատասխանում է հասարակության մի վիճակին, վնասակար է մյուսի համար»: Եթե լուսնի վրա բնակիչներ լինեին, և, եթե նրանցից որևէ մեկը տեսներ երկրի վրա երեխային տարեց մարդու հետ, ապա, պատկերացում չունենալով մարդկության զարգացման օրենքների մասին, միթե նա ամենագեղեցիկ երեխային չէր համարի մեծ գլխով, անճոռնի ձեռքերով ու ոտքերով, բանականություն չունեցող հրեշ: «Ուստի,- եզրակացնում է Ռոշերը,- ընդունում ենք տնտեսական կյանքի տարբեր ձևերի համեմատությունը, որոնցից յուրաքանչյուրը միանգամայն համապատասխանում է իր բովանդակությանը, բայց այդ համեմատությունը պատմական ճշմարտություն կարող է համարվել միայն այն ժամանակ, երբ հիմնված լինի տվյալ ժողովրդին հատուկ զարգացման ընթացքի ճիշտ ըմբռնման վրա»[28]:

---

[26] **Бюхер К.,** Происхождение народного хозяйства и образование общественных классов. СПб., 1897, с. 4.

[27] **Рошер В.,** Начало народного хозяйства /руководство для учащихся и для деловых людей/, т. I. М., 1860, с. 53.

[28] Նույն տեղում, էջ 56-57·

Ընթացիկ տնտեսական հարցերը կապված են որոշակի պայմանների հետ, որոնք պահանջում են համապատասխան նյութի իմացություն: Ըստ պատմական մեթոդի՝ ամեն ինչ հանգում է հարաբերականության օրենքին. հարաբերական ճշմարտություններ և քաղաքատնտեսական օրենքների շարունակական էվոլյուցիա, «տարբեր տնտեսական սահմանումների հարաբերական արդարացումներ», առավել ևս, երբ ուշադրության է առնվում մարդն իր բոլոր չափումներով (Կ.Կնիս)[29]:

Նոր պատմական դպրոցի հայտնի տեսաբան Գ.Շմոլերը նպատակ ուներ (ինչը փորձում էր անել հին պատմական դպրոցը) տնտեսագիտությունը ազատել «դոգմատիզմից կամ անգլո-ֆրանսիական ուտիլիտար (օգտապաշտ) փիլիսոփայությունից և այն դնել ֆիզիոլոգիապես ու պատմականորեն ամուր հիմքի վրա»: Տնտեսությունը մարդկանց և հասարակական կյանքի միայն մի կողմն է: Սոցիալական կյանքն իր ամբողջության մեջ ենթադրում է բազմաթիվ գործոնների փոխներգործություն: Իր հայեցակարգը Շմոլերն անվանում է «էթիկական»: «Ժողովրդական տնտեսության տեսությունը» պետք է ուսումնասիրի, թե ինչ ուժեր են ապահովում ժողովրդական տնտեսության հոգեբանական-էթիկական և տնտեսական միասնությունը, թե ինչպես են այդ ուժերը ներգործում տնտեսական արժեքների և հաստատությունների, փոխանակային հարաբերությունների վրա: *Ժողովրդական տնտեսություն* կոչվածը լայն հասկացություն է, ուստի տնտեսագիտությունը, որպես սոցիալական գիտություն և մյուս գիտությունների համադրություն, իր ընդգրկումներով չպետք է սահմանափակվի փոխանակության և արտադրության ոլորտներով, ապրանքների գների հարաբերակցության, արտադրության ծախքերը պայմանավորող բնատեխնիկական պատճառների վերլուծությամբ, այլ պետք է ներառի նաև տնտեսական կյանքի ինստիտուցիոնալ, էթիկական և մշակութային տարածքների վերլուծությունը. «Քաղաքատնտեսությունն այսօր հանգել է պետության ու հասարակության պատմական և էթիկական ըմբռնմանը, որը հակադրվում է ռացիոնալիզմին ու մատերիալիզմին: Շուկայի և փոխանակության զուտ էկոնոմիկան, այսպես ասած՝ բիզնեսի էկոնոմիկան, որը սպառնում է դառնալ սեփականատերերի դասակարգի գործիքը, նորից վերածվել է բարձր բարոյական և քաղաքական գիտության, որը, բացի բարիքների արտադրությունից, ուսումնասիրում է դրանց բաշխումը, բացի արժեքի հետ կապված երևույթներից՝ տնտեսական հաստատությունները, գիտության կենտրոնական խնդիրն է համարում ոչ թե բարիքների և կապիտալի աշխարհը, այլ մարդուն»[30]:

XIX-XX դարերի սահմանագծում սկզբնավորվում է տնտեսագիտական մտքի ինստիտուցիոնալիզմի ուղղությունը: Վերը նշվածը համառոտ ակնարկ էր և նպատակ ուներ ցույց տալու լոկ այն աղերսները, այն թելերը, որ վերջինս հայտնաբերում է պատմական դպրոցի հետ ունեցած առնչություններում:

---

[29] Տե՛ս **Святловский В.В.**, История экономических идей. М., 1923, էջ 278:
[30] „Вопросы экономики", 2007, №8, с.57.

Ա.Հակոբյանը տնտեսական համակարգերի էվոլյուցիոն ճանաչման առումով կարևորում է նաև Կ.Մարքսի հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսությունը. «Ֆորմացիաների օրինաչափ հաջորդափոխությունը մարքսյան տեսությունը բացատրում էր արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխադարձ կապով, հակադրվածությամբ ու միասնությամբ: Ֆորմացիաների մարքսյան տեսությունը թույլ տվեց պատմությունը դիտել որպես հասարակության էվոլյուցիոն զարգացման նկարագիր, առաջարկեց պարզ ու բովանդակալից մոդել սոցիալական, տնտեսական էվոլյուցիայի երևույթների մեկնաբանման համար, սոցիալական և տնտեսական առաջընթացի՝ էվոլյուցիոն տեսանկյունից ընկալման համար, սակայն մարքսիզմի հեղափոխական ուղղվածությունը, դասակարգային պայքարի՝ որպես հասարակական առաջընթացի շարժիչ ուժի դիտարկումը, բացահայտեցին նրա հակաէվոլյուցիոն բնույթը»[31]: Գոյություն ունի մտավոր ընթացքի որոշակի սկզբունք՝ եթե առաջադրվում է գաղափարը, ապա հետագա վերլուծության մեջ երևույթները դասավորվում են ըստ այդ գաղափարի: Կ.Մարքսի հայեցությունը տեղավորվում է իր ժամանակի մտածողության մեջ՝ որպես թե համաշխարհային պատմությունը բնութագրվում է միասնականությամբ, որտեղ գործում են ընդհանուր օրենքներ, ունեն զարգացման որոշակի ուղղվածություն և, ընդհանուր առմամբ, ասիական, անտիկ, ֆեոդալական և բուրժուական արտադրության եղանակների հաջորդափոխության օրինաչափությամբ «ավարտվում է մարդկային հասարակության նախապատմությունը»[32]:

Ա.Հակոբյանի կարծիքով՝ տնտեսական համակարգերում էվոլյուցիոն գործընթացների և մեխանիզմների վերաբերյալ հետագա զարգացումն ընթացել է հիմնականում էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ ուղղությամբ: Վեբլենը, Քոմոնսը, Միտչելը, Օյքենը, Մյուրդալը, Քոուզը, Հոջսոնը և ուրիշներ ինստիտուցիոնալ միտքը մղել են նոր ոլորտներ, ընդլայնել ներքին տարածքները: Ինստիտուցիոնալ որոնումների մի անսովոր գործընթաց են ապրում այն երկրները, որոնք անցում են կատարում շուկայական հարաբերություններին: Ինչպես ընդհանրացնում է Ա.Հակոբյանը, ռուսական միտքը ընթացող էվոլյուցիոն փոփոխությունների համար առանձնացնում է երեք փուլ. «Առաջին՝ «լատենտային» էվոլյուցիայի փուլում տեղի է ունենում փոփոխությունների ներուժի կուտակում: Երկրորդ՝ «ադապտացիոն» էվոլյուցիայի փուլում տեղի է ունենում տնտեսվարող սուբյեկտների, հասարակության ադապտացիան փոփոխվող պայմաններին: Վերջապես երրորդ՝ համակարգային էվոլյուցիայի փուլում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման մեխանիզմների հիման վրա: Այս փուլում է, որ վերջնականապես ձևավորվում է շուկայական ինստիտուտների համակարգը, համակարգային ինստիտու-

---

[31] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2008, էջ 459:

[32] **Маркс К., Энгельс Ф.,** Соч., т. 13. М., 1959, с. 7

ցիոնալ զարգացումը գերաճում է համակարգային էվոլյուցիայի»[33]:

Ա.Հակոբյանը հասարակության ինստիտուցիոնալ վերափոխման նախապայման է համարում ինստիտուցիոնալ տեսության հիմնական հասկացությունների համակարգված մշակումը և հստակեցումը: Ի վերջո, դա անհրաժեշտ է սոցիալական հարաբերությունների կոորդինացման համար: Մինչդեռ, մի դեպքում *ինստիտուտ, ինստիտուցիա, կազմակերպություն* հասկացությունները գրականության մեջ դիտվում են որպես հոմանիշներ, մի այլ դեպքում դրանք սահմանվում են սոցիոլոգիայի, տնտեսագիտության կամ իրավագիտության՝ իրարից մեկուսացած, զուտ առարկայական տարածքում, այդ «անհամաձայնությունների» հետևանքով խանգարում «ինստիտուցիոնալ հայեցակարգի ստեղծմանը»: Կարելի էր վկայակոչել անունների մի ամբողջ շարք, որոնցից յուրաքանչյուրը, եթե չասենք յուրովի, ապա իր երանգն է ավելացնում *ինստիտուտ* կատեգորիայի մեջ: Ընդհանուր առմամբ, ինստիտուտները նորմատիվային կառուցվածքներ են, որոնք որոշում են անհատների գործունեության սահմանները, ուղղորդում նրանց՝ դրանով իսկ մարդկանց համագոյակցությանը տալով որոշակի կարգավորվածություն և հաստատակամություն: Օրինակ՝ շուկայի ինստիտուտը կարգավորում է փոխանակային հարաբերությունները, սեփականության ինստիտուտը՝ «իմի» և «քոնի» հարաբերությունները, քաղաքական ինստիտուտներն ապահովում և կարգավորում են համագոյակցությունը մեծ խմբերում և դրանց միջև և այլն:

Ա.Հակոբյանը համամիտ չէ *ինստիտուտ* և *ինստիտուցիա* հասկացությունների նույնացմանը, որ հաճախ կարելի է հանդիպել գրականության մեջ: Ինստիտուցիաները նա համարում է տնտեսական սուբյեկտների գործառույթների սոցիալական ձևեր, որոնք որոշում են վերջիններիս կարգավիճակն ու դերը հասարակական կեցության արտադրական համակարգում և կազմավորում են տնտեսական հարաբերությունների գործառույթների կառուցվածքի համալիրը[34]: Անհրաժեշտություն է առաջացել ձևավորելու ինստիտուցիոնալիզմի ելակետային կատեգորիաների համակարգը և տալու դրանց սահմանումները: Օրինակ՝ օգտագործելով ոլորտային մոտեցումը, նպատակահարմար է տարբերակել արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, ֆինանսական, առևտրային ինստիտուտները..., ըստ տնտեսության ներկայացման մակարդակների՝ մեգա-, մակրո-, միկրո-, մեզոինստիտուտները, ըստ ընդգրկման՝ համաշխարհային, երկրային, տարածաշրջանային, տեղային և այլն: Իսկ ինստիտուտների ստորակարգային (հիերարխիկ) կառուցվածքային դասակարգումը թույլ է տալիս առանձնացնել նաև ինստիտուտների բյուրոկրատական և ժողովրդավարական (դեմոկրատական) տեսակները: Գործնականում տնտեսավարող սուբյեկտների միջև հարաբերությունները հիմնվում են ինչպես պատեռ-

---

[33] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2008, էջ 454:

[34] Տե՛ս Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 503:

նալիզմի, այնպես էլ գործընկերության սկզբունքների վրա: Զարգացման ինստիտուտների խմբավորման համար որպես հիմք կարող են ծառայել դրանց հասունության աստիճանը և վիճակը (առանձնացնելով զարգացող, զարգացած և քայքայվող ինստիտուտները, դրանց գործընթացների փուլերը), այսինքն՝ կարևոր նշանակություն է ստանում բազմաքանակությունը, շարժունակությունը, էվոլյուցիոն զարգացման այլընտրանքայնությունը[35]: Ակներև է, որ իմացաբանական լայն ընդգրկմամբ են դիտարկվում ինստիտուցիոնալիզմի ներքին տարածությունները, ընկալման շրջանակները՝ հետաքրքրությունների ոլորտներում հայտնաբերելով հարցի վերաբերյալ տվյալներ: Սակայն չափազանց մանրատումը կարող է հանգեցնել հասկացությունների փոշիացման՝ խոչընդոտելով ինստիտուցիոնալ հասկացությունների հստակեցմանը: Ջ.Ստերլը գրում է. «XX դարում փիլիսոփաները սովորել են մեծ զգուշավորությամբ հարցեր տալ հետևյալ ձևով. «Ի՞նչ է...», օրինակ՝ «Ի՞նչ է ճշմարտությունը», «Ի՞նչ է թիվը», «Ի՞նչ է արդարությունը»: Քսաներորդ դարի դասերը (թեև դրանք սկսել են մոռացվել քսանմեկերորդ դարում) հուշակում են, որ այդ հիմնահարցերի լուծման լավագույն ձևը դրանց աննկատ, «գաղտագողի» մոտենալն է: Մի հարցրեք՝ ինչ է ճշմարտությունը, այլ հարցրեք՝ ինչ պայմաններում ենք մենք խոսում որոշ արտահայտությունների մասին, որ դրանք ճշմարիտ են: Մի հարցրեք, թե ինչ է թիվը, այլ հարցրեք, թե թվային արտահայտություններն ինչպես են գործառվում իրական մաթեմատիկական պրակտիկայում: Մենք առաջարկում ենք այդ մեթոդը կիրառել նաև «ինչ է ինստիտուտը» հարցի պատասխանի ժամանակ: Փոխանակ իսկույն ցուլի եղջյուրներից բռնելու և ասելու՝ «Ինստիտուտը...», եկեք սկսենք ինստիտուցիոնալ փաստերի մասին հաղորդումների արձանագրումից: Եթե մեզ հաջողվել է պարզել այդ փաստերի բնույթը և դրանց տարբերություններն այլ կարգի փաստերից, ապա, ըստ երևույթին, պատասխանելով «ինչ է ինստիտուտը» հարցին, կհայտնվենք ճիշտ ուղու վրա»[36]: Դա էլ հնարավորություն կտա ինստիտուցիոնալիզմի համակարգը տարբերակելու ըստ իր առանձնահատկությունների:

* * *

Անգլիացի Ջոն Մեյնարդ Քեյնսը, լինելով տնտեսագիտության «հիմնարար հայրերից» մեկը, բազմակողմանի օժտված անձնավորություն և ունենալով փայլուն գիտելիքներ մաթեմատիկայից, փիլիսոփայությունից, գրականությունից և արվեստից, ընդլայնեց տնտեսական երևույթների մասին պատկերացումները: «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» (1936) աշխատության ներածականում նա նկատում է. «Այս գիրքն ուղղված է հատկապես իմ գործընկեր տնտեսագետներին: Դրա գլխավոր նպատակն է դիտարկել տեսության բարդ հարցերը և ապա միայն՝ դրանց կիրառության հիմնախնդիրները....: Ես ենթադրում եմ, որ այն տնտեսագետ-

[35] Տե՛ս նույն տեղը, էջ 509:
[36] «Вопросы экономики», 2007, № 8, с.7

ները, ովքեր անքակտելիորեն կապված են «դասական տեսությանը», կկարծեն, թե ես բոլորովին ճիշտ չեմ, ոչ մի նոր բան չեմ ասել: Երկար տարիներ ես ապրել եմ այն համոզմունքով, որ տեսությունները, որոնց վրա ես այսօր հարձակվում եմ, վրիպել են սկզբունքային պահերում...»[37]: Ասել է, թե՝ դժվարությունը ոչ թե նոր գաղափարներն ընդունելու մեջ է, այլ հնից ազատվելու[38]: Ինչ խոսք, անվիճելի չեն Քեյնսի առաջադրած տեսակետները, սակայն տվյալ դեպքում հարցը վերաբերում է այն դիտարկումներին, որոնք առնչվում են նրա հետազոտական դաշտում այնպիսի գաղափարների առաջադրմանը, այնպիսի կանխադրույթներին, որոնք սկզբնավորեցին նոր վերլուծական ուղղություններ: Նա վերանայեց այն բանաձևերը, որոնք պայմանավորել են դասական տնտեսագետների մասին պատկերացումները՝ սկսած XVIII դարի վերջերից: Նոր տեսությունները ենթադրում են նաև նոր հասկացություններ, հետևապես՝ տնտեսական կյանքի վերլուծական շառավիղների ընդլայնում: Հին հասկացություններով նոր տեսություն կառուցել չես կարող: Հենց այս իմաստով էլ Ա.Վարդանյանը, հետամուտ լինելով Քեյնսի սկզբունքին՝ տեսադաշտում պահելու «մարդու բնույթի և նրա ինստիտուտների բոլոր կողմերը, ըստ «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության, դասակարգում է վարքագծային տեսությունների վերաբերյալ կարծիքները, հատկապես շեշտելով «տնտեսագիտության և հոգեբանության համակցման իրողությունը», ինչը դարձավ վարքագծային տնտեսագիտության առանցքը, լրիվ ռացիոնալության դասական հիմնադրույթներից փաստացի հրաժարումը և, ըստ էության, սահմանափակ ռացիոնալության սկզբունքի կիրառումը, հեռանկարների, դրանց անորոշության և շաղկապված սպասումների մեթոդաբանական շեշտադրումը տնտեսագիտական վերլուծության մեջ, փորձի և փաստերի որոշիչ դերի հաշվառումը[39]:

Հայտնի է, որ տնտեսագիտական դասական դպրոցը խնայողության բարձր մակարդակը համարում էր տնտեսական աճի պայման, քանի որ խնայողությունները կապիտալի կուտակման աղբյուր են համարվում: Խնայողությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ բողոքականության բարոյագիտական բաղկացուցիչներից մեկը՝ աշխատասիրություն, համեստություն, ժուժկալություն: Այստեղ է, որ Քեյնսը հարցի քննությունը կատարում է իմացաբանական այլ ոլորտում՝ ձևակերպելով այն հիմնական հոգեբանական օրենքը, ըստ որի՝ «... մարդիկ, որպես կանոն, հակված են եկամտի աճի հետ ավելացնելու իրենց սպառումը, բայց ոչ այն չափով, ինչ չափով աճում է եկամուտը»[40]: Ա.Մարգարյանը կատարում է այդ հիմնական հոգեբանական օրենքներից բխող և դրանք պարզաբանող բազմաթիվ վկայակոչումներ, ցույց տալու համար Քեյնսի տնտեսական լաբորատորիայում նրա կարևոր դերը լրիվ զբաղվածության ապահովման, սպասվող եկամուտների,

---

[37] **Кейнс Д. М.,** Общая теория занятости, процента и денег, Избранное, М., 2007, с. 39.
[38] Տե՛ս նույն տեղը, էջ 18-19:
[39] Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», 2010, №1, էջ 32:
[40] **Кейнс Д. М.,** նշվ. աշխ., էջ 117:

սպառման, ներդրումների և դրանց դինամիկ փոխհարաբերություններով պայմանավորված հիմնախնդիրները լուծելիս: Ինքնին հասկանալի է, որ այդ օրենքում, որպես «հավասարակշռվածության հաստատմանը նպաստող» գործոն, իրենց արտահայտությունն են գտնում հասարակական արտադրության գործընթացի մի շարք ընդհանուր քանակական կախվածություններ:

Ադամ Սմիթի հայեցողությունն իր հիմքում ուներ Նյուտոնի ֆիզիկան: Տարբեր տնտեսական երևույթների արտաքին փոխանակության և անկայունության հիմքում առկա են ընդհանուր պատճառներ: Տնտեսության իրական արտահայտությունը, նրա կարծիքով, համապատասխանում է «բնական» վիճակին. «Մարդկային հասարակությունը վերացական և փիլիսոփայական տեսանկյունից կարելի է համեմատել հսկայական մեքենայի հետ, որի ճիշտ և համաձայնեցված շարժումները տալիս են մեծ քանակությամբ օգտակար արդյունքներ»[41]: Հետևապես՝ հասարակությունը լավագույն արդյունքների կարող է հասնել միայն տնտեսական ուժերի ազատ խաղի պայմաններում, իսկ այստեղից արդեն ածանցվում է «լրիվ ռացիոնալության դասական հիմնադրույթը»: Ա.Մարգարյանն, անդրադառնալով Քեյնսի հայեցության մեջ նշված հարցի վերաբերյալ առկա տեսակետներին, գաղափարներին, ընդգծում է այն նոր հարցադրումները, որոնք արգասաբեր եղան տնտեսագիտական մտքի զարգացման առումով: Այս իմաստով հատկապես կարևորում ենք բազմաթիվ մտքեր, որ Քեյնսն արտահայտել է տնտեսական երևույթների ճանաչողության ընթացքում ռացիոնալի և իռացիոնալի խնդրի շուրջ: Այսպես՝ երկարաժամկետ սպասումների մասին նա գրում է. «... չի կարելի եզրակացնել, թե աշխարհում ամեն ինչ կախված է մարդկային հոգեբանության իռացիոնալ ուժերի խաղերից: Ընդհակառակը, երկարաժամկետ սպասումների վիճակը ոչ հաճախ բավական կայուն է, և նույնիսկ, եթե դա այդպես չէ, ապա մյուս գործոններն ունենում են փոխհատուցող ազդեցություն: Պետք է միայն հիշել, որ մարդկային որոշումները, որքանով դրանք ազդում են ապագայի վրա՝ անձնական, քաղաքական կամ տնտեսական գործերում, չեն կարող ենթարկվել խիստ մաթեմատիկական հիմնավորումների, քանի որ բացակայում է դրանց հիմնավորման բազան: Հենց գործունեության մեր բնածին ծարավն է այն ուժը, որը շարժում է աշխարհը, մեր «եսի» ռացիոնալ կեսը, ինչպես կարողանում է՝ զբաղվում է այլընտրանքների ընտրությամբ, հաշվարկում է այնտեղ, որտեղ կարելի է, սակայն հաճախ հայտնվում է երջանկություն փնտրելու մեր քմահաճույքների, տրամադրությունների և ցանկությունների իշխանության ներքո»[42]: Ակներև է, որ շատ բան, այնուամենայնիվ, կախված է «մարդկային հոգեբանության իռացիոնալ ուժերի խաղերից»: Այստեղ է, որ, Քեյնսը կառուցում է երևույթների գնահատման իր փիլիսոփայությունը՝ ռացիոնալության հասկացողությունը քննելով մարդու բնույթի

---

[41] Մեջբերումը Ադամ Սմիթի «Բարոյական զգացմունքների տեսություն» աշխատությունից է տե՛ս Философия социальных и гуманитарных наук, М., 2005, էջ 360:

[42] **Кейнс Д.М.,** նշվ. աշխ., էջ 169:

խորքային չափումների մեջ, դրանով իսկ առաջադրելով «սահմանափակ ռացիոնալության գաղափարը», որը դարձավ նոր ինտերնացիոնալիզմի հիմնադրույթներից մեկը: Ըստ վերջինիս՝ նորդասականների հայեցության մեջ բացարձակ ռացիոնալ գործող մարդու մոդելը փակուղի է ստեղծում տնտեսության իրական գործընթացների ճանաչողության համար, որը հաշվի չի առնում անորոշության, տեղեկատվության սահմանափակությունը, մարդկանց պահվածքի դրդապատճառների բազմազանությունը, և, ի վերջո, մարդկանց գիտելիքները և ճիշտ եզրակացություններ կատարելու ունակությունները նույնպես անսահմանափակ չեն: Հետևապես՝ տնտեսական որոշումները, որոնք իռացիոնալ են թվում, կարող են ներքին իմաստ ունենալ:

Վարքագծային դրսևորումների գնահատումների և կանխատեսումների շուրջ գրանցումներ են կատարվում նաև Քեյնսի «Տնտեսական հնարավորությունները մեր թոռների համար» աշխատությունից:

Անհրաժեշտ չեմ համարում անդրադառնալ Ա.Մարգարյանի կողմից Քեյնսից բերվող բոլոր հղումներին. դրանք մտքեր, հասկացություններ են, որոնք, նրա կարծիքով, ժամանակի ու տարածության իրենց շառավիղների մեջ պայմանավորեցին վարքագծային տնտեսագիտության ուղեգծերը:

* * *

Հոդվածներից մեկում[43] անդրադարձել ենք Հ. Ջուհարյանի «Տնտեսագիտություն և մաթեմատիկա» կապի արծարծումներին[44]: Ռասելի ոգով ասած՝ իր վերլուծության մեջ նպատակ ունի ցույց տալու, որ տնտեսագիտական «տրամաբանությունը դարձել է առավել մաթեմատիկական, իսկ մաթեմատիկան՝ առավել տրամաբանական»: Այս անգամ նա փորձում է դիտարկել Նոբելյան մրցանակի դափնեկիր Բեննեթ Էրոուի «պարադոքսը»: Հարկ է նկատել, որ վերջինս բազմաթիվ տարակարծությունների հիմք է դարձել, որոնց նշանակալից մասն ունի մերժողական բնույթ, բայց հայտնի է նաև դրա ազդեցությունը քաղաքականության փիլիսոփայության և բարեկեցության տնտեսության վրա: Նոբելյան մեկ այլ մրցանակակիր Է.Վիկրին ձևակերպում է Էրոուի տեսությունից բխող հետևյալ հինգ աքսիոմները.

կոլեկտիվ ռացիոնալություն կամ ունիվերսալ կիրառելիության աքսիոմ. որոշումների կայացման ազատությունը առանձին սուբյեկտների համար սահմանափակ չէ,

միաբանության կամ Պարետոյի աքսիոմ. եթե ամեն մի անհատ նախընտրում է B-ի նկատմամբ A-ի այլընտրանքը, ապա դա պետք է ճշմարիտ լինի նաև ամբողջ հասարակության համար,

---

[43] Տե՛ս Սոցիալ–տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2010, էջ 452-454:

[44] Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», 2008, №2:

- տրանզիտիվության աքսիոմ. եթե հասարակությունը գերադասում է A-ի այլընտրանքը B-ի նկատմամբ, իսկ C-ի նկատմամբ B-ի այլընտրանքը, ապա պետք է նախընտրի C-ի նկատմամբ A-ի այլընտրանքը,

- արտաքին այլընտրանքներից անկախության աքսիոմ. եթե անհատները կատարում են ընտրություն A և B այլընտրանքների միջև, ապա այդ ընտրությունը կախված չէ C-ի այլընտրանքի վերաբերյալ նրանց կարծիքից,

- դիկտատուրայից հրաժարման աքսիոմ. ոչ մի անհատ չի կարող իր նախընտրությունները պարտադրել հասարակությանը[45]:

Ք.Էրոուի տեսության ընդհանուր եզրակացությունն է. «Գոյություն չունի հասարակության բոլոր անդամների կարծիքները հաշվի առնող կոլեկտիվ ընտրության ռացիոնալ կանոն», այսինքն՝ գոյություն չունեն այնպիսի տնտեսական և պետական մեխանիզմներ, որոնք թույլատրեն անցումը ռացիոնալ անհատական ընտրությունից ռացիոնալ հասարակական ընտրության: Հ.Ջուհարյանն ավելի շատ անհամաձայնություն է արտահայտում Էրոուի վերլուծական նախադրյալների վերաբերյալ, որի «կիրառած մաթեմատիկական ապարատն ու քննարկվող ընտրության խնդիրը համատեղելի չեն»[46]: Սակայն, տրանզիտիվության, կարդինալության, իրար բացառող տարբեր այլընտրանքների բազմության և այլ հարցերի վերաբերյալ մեկնությունները, համադրված Կոնդորսեի, Դեկարտի, Լորենսի տեսությունների ինչ-ինչ տարրերով, կամ տնտեսական երևույթների՝ բնական գիտություններից վերցրած օրինակների հետ զուգահեռներն ընդամենը վերլուծության գեղեցիկ ձև են: Եթե մաթեմատիկան կարող է ապացուցել, որ մեկին գումարած մեկը հավասար չէ երկուսի, ապա նույն հաջողությամբ կարող է ցույց տալ, որ եթե որևէ անհատ (կամ անհատների խումբ) նարինջը նախընտրում է խնձորից, խնձորը՝ խաղողից, նշանակում է՝ նարինջը նախընտրում է (են) խաղողից:

Հայտնի է, որ վաղուց արդեն անհամաձայնություն կա տնտեսագետների միջև՝ կապված երևույթների վերլուծության սկզբունքի հետ: Խնդիրը լոկ էվրիստային վերաբերող հարցերի շուրջ բանավեճը չէ: Դա բանավեճ է տնտեսագիտության հիմքերի արծարծումների, այսպես ասած՝ տրամաբանական և մաթեմատիկական վերլուծության մեթոդների կողմնակիցների միջև: Մաթեմատիկական մեթոդը տնտեսագիտության ուսումնասիրության առարկան նեղացնում է՝ տնտեսագիտության տեսությունը վերածելով «քանակական» գիտության, առաջնորդվելով այն սկզբունքով, թե «գիտությունը կատարում է չափում», որը հաճախ խնդիրը զրկում է որոշակի բովանդակությունից՝ չբացահայտելով պատճառի ու հետևանքի իրական սահմանագծերը: Իսկ այդ բարդույթը պայմանավորված է տնտեսագիտության տեսության ատաղձով, որը, ըստ Լ.Միզեսի, «գիտություն չէ առարկաների և շոշափելի նյութական օբյեկտների մասին. դա գիտություն է մարդկանց, նրանց մտադրությունների և պահվածքի մասին: Բարիքները, ապրանք-

---

[45] Տե՛ս **Киселева Е.А.**, Макроэкономика. М., 2006, էջ 6:

[46] «Բանբեր ՀՊՏՀ», 2008, №3, էջ 37:

ները, հաստատությունը և պահվածքի բոլոր հասկացությունները բնության տարրեր չեն. դրանք մարդկային մտադրությունների և պահվածքի տարրեր են...: Նա, ով ցանկանում է զբաղվել դրանց ուսումնասիրությամբ, չպետք է նայի արտաքին աշխարհին, նա պետք է դրանք փնտրի մարդկանց մտադրություններում: ...Արտադրությունը ինչ-որ ֆիզիկական, նյութական կամ արտաքին երևույթ չէ. դա հոգևոր և մտավոր ֆենոմեն է»[47]: Այստեղից էլ նրա խիստ բացասական վերաբերմունքը տնտեսագիտության մաթեմատիկական տեսության նկատմամբ, որը, լինելով «արատավոր մեթոդ», ձգտում է «կատալակտիկայի խնդիրները լուծել՝ առանց հիմնվելու շուկայական գործընթացների վրա» և, ուժեղ տպավորություն թողնելով «դյուրահավատների» վրա, չի կարող ցույց տալ, թե ինչպես անհավասարակշռված վիճակից ծագում են գործողություններ, որոնք տանում են հավասարակշռության[48] և այլն:

Հարկ չենք համարում նորից անդրադառնալու տնտեսագիտության մեջ մաթեմատիկայի կիրառության չափավորության մասին նշանավոր տնտեսագետների կարծիքներին: Եվ խոսքը չի վերաբերում Միզեսի գուցե և ծայրահեղ բնորոշումներին: Այստեղ կարևորվում է ելակետի նշանակությունը. մաթեմատիկայից դեպի տնտեսագիտությո՞ւն, թե՞ տնտեսագիտությունից դեպի մաթեմատիկա: Կարելի է բնական գիտությունների հետ զուգահեռներ անցկացնելով՝ կատարել տնտեսական կյանքի գրավիչ վերլուծություններ: Այս առումով Հ. Ջուհարյանի շարադրանքը արժանի է գովասանքի, սակայն որպես խորհուրդ՝ շատ պետք չէ տարվել դրանով: Այնուամենայնիվ, ճիշտ է, երբ տրամաբանական վերլուծությունը նախորդում է մաթեմատիկական վերլուծությանը: Շումպետերը իրեն բնորոշ սրամտությամբ նկատում է՝ այն, որ Մենգերը չի տիրապետել մաթեմատիկական ապարատի, վկայում է միայն նրա օժտվածության մասին: Հայտնի է, որ մաթեմատիկան հասնում է վերացարկման մի այնպիսի աստիճանի, որտեղ վերանում է նաև մեծության գաղափարը: Այդպես կարելի է ժխտել նաև տնտեսագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտություն: Նկատենք, որ ժամանակին եղել է նման տեսակետ, ըստ որի՝ տնտեսագիտության մեջ գործող օրենքները «փոխ են առնված մեխանիկայից»:

Էրոուի անհնարինության տեսության դրույթների վավերացումն այն ընդհանրացման մեջ, թե գոյություն չունի կոլեկտիվ ընտրության ռացիոնալ կանոն, որը հաշվի առնի հասարակության բոլոր անդամների կարծիքը, վկայում է հասարակական հաստատությունների անկատարության մասին: Ընդունելի է Ե.Կիսելյովայի այն դիտողությունը, թե շուկայականը բնավ տնտեսական սուբյեկտների գործողությունները կոորդինացնող կատարյալ մեխանիզմ չէ, սակայն տեսաբան տնտեսագետները չեն առաջարկում դա փոխարինել դիկտատուրայով կամ պլանային տնտեսությամբ: Այո, ըստ Էրոուի, ռացիոնալ-հասարակական ընտրությունը չի կարող լինել փոխ-

---

[47] **Людвиг фон Мизес,** Человеческая деятельность. Трактат экономической теории. Челябинск, 2005, с. 89, 134.

[48] Տե՛ս նույն տեղը, էջ 332-335:

զիջումային, բայց փոխզիջումային փնտրտուքը իրականության մեջ միշտ ուղեկցում է կոլեկտիվ ընտրությանը[49]: Սա արդեն աքսիոմ է, որը ենթադրում է համապատասխան վերլուծական հիմքեր:

РОБЕРТ САРИНЯН – ***Некоторые наблюдения современной армянской экономической мысли.-*** Проблемы национальной экономики в литературе трактуются по разному. В статье анализируются наблюдения армянских экономистов по вопросам глобализации, торговых отношений Армения-Евросоюз, образование-наука-экономический рост, институты и экономический рост, экономической теории и математики.

ROBERT SARINYAN – ***On Several Observations concerning Modern Armenian Economic Thought.-*** Problems of national economy are variously interpreted in the literature. This article contains analysis of observations of Armenian economists on the issues of globalization, Armenia-European Union trade relations, education-science- economic growth, institutions and economic growth, economic theory and mathematics.

---

[49] Տե՛ս **Киселева Е.,** նշվ. աշխ., էջ 70: Նկատենք, որ արդի ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառներից մեկն էլ համարվում է տնտեսագիտության կտրվածությունն իրական կյանքից՝ դրանում մաթեմատիկայի չարաշահման հետ կապված: Ա.Գրիգորյանը վկայակոչում է տարբեր հեղինակների, որոնց կարծիքով մաթեմատիկական մոդելները հաճախ օգտագործվում են ոչ թե տնտեսական իրականությունն արտահայտելու, այլ իրականությունն այդ մոդելներին հարմարեցնելու համար: Ֆ.Միրովսկու դիպուկ արտահայտությամբ՝ տնտեսագիտությունը վերածվել է «կիբորգյան գիտության» (տե՛ս Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2000, էջ 51-52)